176

1. Խռովել ու մոլորվել է գառնուկդ,
Բարի Հովիվ, փնտրի՛ր, գտի՛ր Դու նրան:
Վիրավոր է և ուժասպառ գառնուկդ,
Ո՞վ հարեհաս, հասի՛ր, բուժի՛ր Դու նրան:

2. Գայլի որջն է տանում գառան այդ ճամփան,
Փրկի՛չ Հիսուս, հասի՛ր, փրկի՛ր Դու նրան:
Խռովել է մի ոչխարից նա անբան,
Հոտը թողել ու բռնել է այդ ճամփան:

3. Խռովել է, էլ հետ դառնալ չի ուզում,
Ճահճի մեջ օրեօր է նա սուզվում:
Սոված գայլն է շրջում նրա բոլորը,
Այդ չի տեսնում խորասուզված մոլորը:

4. Մեկի համար Դու ողջ հոտը թողեցիր
Ու այն մեկի թարմ հետքերով գնացիր:
Այս մեկն էլ ճիշտ նման է այն մեկին,
Չէ՞ որ, Տե՛ր, նույնն ես անում ամենքին:

Պատրաստված է Հոգևոր Արխիվի Կողմից | hogevorarchive.com | ergaran.com | 2025